## ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Մազդ coifé, զգեստդ նորաձեւ,
Փողպատ թանկագին, մատնի ու շատ զարդ,
Խօսուածքդ հաշուած, ծանր, քարեձեւ,
Ա՛խ, ինչպէս սիրուն ես, հայ երիտասարդ:
  Սիրուն ես, ղորդ է: Բայց ես գլխուդ վա՛յ,
  Տեսնելով որդուդ, կուտամ քեզ, խեղճ հայ:

—

Ընտիր ու ազնիւ դու ունիս ճաշակ,
Թանկագին ձիեր կայշի ամեն մարդ,
Ճիտակ Վենայէն բերած է քու կառք.
Bonton-ով կայրիս, հայ երիտասարդ:
  Նուրբ ճաշակ ունիս: Բայց էր գլխուդ վա՛յ,
  Տեսնելով որդուդ, կուտամ քեզ, խեղճ հայ:

—

Թօսքովի պարտէզ... Խաւարչտին գիշեր...
Ուրիշ կերպ սոխակ ու թառամած վարդ...
Մեծածախ ընկրիք... գինիի շիշեր...
Քէֆ արա՛, քէֆ, իմ հայ երիտասարդ:
  Երանի քեզի: Բայց ես գլխուդ վա՛յ,
  Տեսնելով որդուդ, կու տամ քեզ, խեղճ հայ:

—

Ի՞նչ է պէտք թատրոն, լրագիր, ուսում,
Երբ կան առջեւըդ биллiардъ ու քառթ.
Անհաշւան խօսքեր՝ «ազգի զարգացում»,

## Բ. Լ Ո Ի Մ Ա Ց

*Դուն քէֆդ նայէ՛, հայ երիտասարդ:*
*Միշտ ուրախ եղիր: Բայց ես գլխուդ վա՜յ,*
*Տեսնելով որդուդ, կուտամ քեզ, խեղճ հայ:*

—

*Կանցնին ու կերթան շատ տարի այսպէս,*
*Կը թոռմի բուշիդ ցողուն այդ վարդը.*
*Գրպանիդ փողը կը հալի ձիւնի պէս,*
*Ճաս կը տրտմի հայ երիտասարդը:*
*Ցաւակից չունի: Միայն բանաստեղծ,*
*Կը մնայ նորան կարեկից անկեղծ:*

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ